4) Ուր. kai «ասուլա» (=ասուր. kaš pan «ի գեմա»), որինակ՝ Argišt-kai, Menuš-kai և այլն, իսկ մի անգամ ասուլվերջում է ka (Sarduri-ka) — խեթերեն ka «այտակ, անուն»: Թերևս սրանց հետ է և հայոց բարբառային «կա» (կա, ցնում — անցնում էմ > կցնում, ոսկչ), վորը կա և լազերենում ասլանի տեղանքում համար էօ մեղք:

5) -uki «իսկ» — խեթական uka «չիս» (տես վերը):

6) edia «տխուկ», tamz — խեթ. edi «զինը, զնայի ախ կողմ (տես Papan., 82)»: Ուրարտերենի կազմության համար համեմատել նաև խեթերեն apia «այտակ» և գոյականներից ներգոյական նշարվով — ānapāia, kunzagāāia, huprušāia, tuzzia, zaḥāia, keltia և այլն և այլն (Papan., էջեր 11, 63): Կա և ուրարտերենում edi «ասուց» «ս» ներգոյականի (edi āsibi kai-uki «այն անցավ ասլան») և -ini բացառականի վերջնադրությամբ՝ edini

¹ Այլապես կարող էր թարգմանությունը և ակնարկ (տառցիկն):

² Sommer-ը և Ebeling-ը թարգմանում են «hier (zu diesem Falle)», «ուր նրանց Papanikri, էջ 86:

(Վերանից, H3 TOFOZ) վորպես հետզիբ, ըստ իւ ալլ edin—հալլայ անզկն, իսկ istini—հալլայ աստնն։

7) Ուր. laku du- «փլցնել», վորից գործ է տեղում laku-du-lie (ով փլցնեւ թշու ընդդը), lakuiani «փուլ յեկած»—խեթերինն laki «il fait tomber» (Hrozny, Code hitt., էջ 6), ուր խառնուած է ասամը Թափելու մասին։

8) Ուր. ini «այս»—խեթ. eni-š, չեղար սեռի՝ eni, ini «այս, այն», (Hr., Spr. d. Heth., 220)։

9) Ուր. ulx- «հասել (ալլպես ենք հասկանում ulxulini թայանը Բեշիշլլյուի Ռուսու 1-ի արձանագրության մեջ), վորը կազմած է հաճանորեն u- նախածանցով (=ուսաց y-ՈՒԼԻԿԵ, y-ՈՒԼԻԿԵ...—խեթերինն «u» նույն նախածանցին) և *ulx- արմատից, վորը տեսնում ենք մենք խեթերինն is^hul^h, «չուր և Թափուած», is^hul^hurāš—ջրի աման է, is^hu «արշավանք», is^hul^hatar (id.)։ Ուրարտերինն ulx- թայարմատը նույնությամբ Պապին և և հայերի մաս (ուլիս—ջրի հասանք)։

10) Ուր. la aweraš-ili «պղծական գործերին» (Հալլ, հայ.)¹(?) —խեթերինն warea «պղծության գուլ» (Hr., Bogh. St. III 176²; Sommer, Heth. II, 48)։

11) Ուր. tur- «պարտավորեցնել» (?) գործ է տեղում միայն Սարգուրյան ասորեգրի VI արձանագրության մեջ (տես մեզ մաս էջ 25—26) turubi ասորիս 1 զեմք յեղակի մեով (պարտաւորեցի, պարտավորեցրի)։ Ալլ tur- արմատից է և turini «պարտավորած» (=մեղավոր), վոր տեսնում ենք տնեմքի ֆորմուլայի—«ով այս արձանագրությանը ջարդե... մեղավորին Խալլը, Տեյլերան... թե անունը, թե ասունը, թե սերունդը (mei tini, mei arnuzi, mei zilbi Զփարթնայի արմ-յան մեջ) հողին թող հանձնեն»։ Համեմատել խեթ. tur- «կապել», իսկուսի փոփոխության տեսակետից (կապել>պարտավորեցնել) հմմտ. լատ. ligo «կապում եմ» և obligo «պարտավորեցնում եմ», ուսաց ԲԵՅԱԿԵ և ՕԲ՝ԵՅԱԿԵ (սացցիկ և ՕԲ՝ԵՅԱԿԵ մեկից)։

12) Ուր. ter du- «քարնայցնել» (արձանաքարը տեղից՝ esini)—խեթ. šara da- (նույն իմաստով)։ Ուրարտերինում կա և ասունմին šeri «ավելցուկ, ԽԼԻՄԵՄԵՆ», վորը մեր կարծիքով նույն բանն է և հիմնականում նշանակում է քարնայ (հմմտ. հայոց

¹ «Քաղես էր Թարգմանու Սեյուր Թեքու ավելի լավ լինի Թարգմանեյ աստիճանարկներ»։

սարակ էզագոթը, աթմյան սար սինո, իսպանական ռետե
եսար, լիմաուզթոս)։

13) Ուր. tek- «ձգել» (?) որինակ՝ Թուրք նվաճելի Ա յեր-
կիրը (4) tekuni ¹Menu-kai «ձգելի Մենուայի քառն»։ Համեմա-
տել խեթերին tek-ug-nu (id.) (բոս F. Hrozny-յի tekunau «a-
hergeben», բոս Sommer-Ehehoff-ի «zeigen, offenbaren», բոս
A. Götz-յի «beweisen»)։ Քերես մզկի ճիշտը լինի ուրար-
տերենը Թարգմանել շատուցել, վարով մզկի մաս կլինի խե-
թական բայի խմատին²։ Հմմտ. հայոց լափեսակի (շափի մեջ
ձգել = յափս տակել), աղսակի (շափ ձգել), նախաակի (շա-
տալ գցել) իրեն, վորտեղից նախատակ = առաջի գիրքերում խե-
թաթերեն կազմ, իսկ նառագայում՝ մարաիրոս, նախատակ), լիե-
տակի շիրադուքյան մեջ գցել և այլն։

14) Ուր. nik- «գուժարել» (զորք), ինչպես մի անգամ գործ
և ամփել Սարգուրի տարեկրում շին գորքերը nikuli («-գուժա-
րելի»)։ Համեմատել խեթերին կրկնակ բայը ninik- «նախաքել
(զորք)»։

15) Ուր. badg-ul-ubi «ցրիվ մզի» (?) = խեթ. vatik- (id.).
Հմմտ. քերես հայոց վայթ-իմ (տառնց քո վերջանելուն)։

Ուրարտերենի և խեթերենի համեմատական բառագրու-
թյանը անշուշտ մզկի շատ նվաճումներ կարող և ունենալ, յե-
թե ուրարտերենի շատ բառեր ճիշտ հասկացվիլին։ Որինակ, Բնչ
և Նշանակում anuni բայական (տարիս 3 գ. յեզակի), յեթե
պարտապրեցին, վորի դեմ բնագիրը չի մեղանշում, ապա
այդ կպաշտպանվեր խեթերին նույն արմատի բայով (anta-
«leisten», պարտապրել, anur «vorgeschriebene Leistung», տես
Papan., 41)։ Գամ, որինակ, Բնչ և Նշանակում Մների՝ զոան ար-
ձանագրության xuruna բառը արդյոք «խորան» չէ, վորի նմա-
նը կա և խեթերենում (hurau «վրան», կամանց մարքվելու
համար) և քերես այդ xoron- սկզբում նշանակելու «կամար»,
«չերկնային կամար» և «չերկիրնք» (հմմտ. սլավոնական хоромы,
храм «կամարանե շինք», պարսկերեն՝ harem), նման գերմանա-
ցոց Zell «վրան» և Himmelzell «չերկնային կամար» խմատա-

¹ Խեթերենում կա և tekunani բայը, վորը զմեզ և Թարգմանում ի
նպատ ունենալով, վոր դրա սրբիչը մարզ և, մենք տառադրում ենք Թարգ-
մանել վայր ձգել, վայր զնել և նախադասության միայն կլինի առի մար-
զում գու լիլի վայր գցել։ Խեթագետները այդ տեղ արժանը կարգեցում
են Օդկերպ. *deke- «գերել» zeigen բայարմատի նախ

փոխությանը: Նման կամայնական ծագում է իմաստական անցումները ենք մենք տեսնում խեթերեն kammara «ոգ, բաց տարածություն» բառի նկատմամբ, զորը թերևս սկզբում նշանակել է «չերկնային կամար» (= չերկինք) և պակել է փոքր-տախտական շարքի բառի մեջ (նույնըը վերջերի են Փոքր Ասիայից), հայոց կամար (= բով), լատին. camera, գերմ. Himmel «չերկինք» (ուր սկզբի «li» նշյունը ստացվել է «k»-ից) և ալլև և ալլև: Յեթև մեր այս մասնացումները նիշտ են, ապա ուրարտական xutana, հայոց խորան (= չափի, վրան), պոլոնական хором-ы (храм), խեթական xutnan բառերը կարող ենին նշանակել զույ միայն սկամարանն վրան» ալլև՝ «չերկնային — չերկինք» և կապվել նույնների xton-os «մամանակ» բառի հետ, զոր սկզբում նշանակել է «չերկնային չբնակ» և հետո՝ «մամանակալի»:

ՅԻՐԱՐՐԱՆԻՈՒՐԱՐՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅԵՐ

Արարյանները քերականությամբ և բառամթերքով տվելից մաս է խուրրի-միտանների լեզվին: Մենք արդեն մասնաշեղ ենք ընդհանուր մարդկաները — ուղղակի. հուլդի 3, հայց. հուլդի 0, ներգ. հուլդի 3, սեռ.-ար. հոգնակի -awc (= խուրրիական -wc և -wi), իսկ բայականից՝ աորիստ 1 պ. հոգն. -u3c: Մենք կարծում ենք, զոր խուրրիերենի չեզակի արականի -d վերջավորությունը վարպես նպատակի արական (սկամար) նույն ծագումով է, ինչ տեսնում ենք և ուրարտական ուղեորական հուլդի -d վերջավորության մեջ: Ռոտ-Շամբայում չերենն հանգամ ընկնազիբ, բայց միայն բազմաշնական, գրության մեջ կարգում ենք ¹u3i-d «für Դեբիտ», անգ-ո-ժ «für Դեմիր» և ալլև (հմտ. նաև zu-ta «խնդ կամար»): Արարյաններում անգամ այդ -di (=d) վերջավորությունը չերենն ալլազիբի արականի իմաստ է պատմաբան: խուրրի լեզուն ևս ունի նման կանգրուկներ, ինչպես ուրարտերենում, վրացերենում և ալլև: Որինակ, DINGIR² URU-nibi-na ³Samuhah-i-na duruhah-i-na: խուրրի լեզուն ունի -ni հասկացական սովորույթների համար նման ուրարտերենին (-ini):

Բառերից առաջիմ կարելի չե համեմատել — 1) ուրարտ. pituše (piguše) «ուրարտություն» = խուրրի piš- «ուրարտական» (տես «Zum Sebar u. Urart.», էջ 135, ման. 2). 2) ուրարտ. edi(a)

առին(տեղ)» — խուրբի etli «զերարեքմամբ»¹. 3) ուրարա. ԶՈՒՔ
 ԷԲՆՁՆ — խուրբի ԶՈՒՈ ԷԲՆՁՆ ԶՈՒՆ ԷԲՆՁ ԿՈՄԱՐ», ԶՈՒՔՔ ԷԲՆՁՑ
 3) ուր. iese Էյես — խ. iese Էյես (ըստ Friedrich-ի). 4) ուր-
 pillie Էջրանցք»² — խուրբի (ՀՈՒՍԱՆՈՒՄԱՐԱՆ) pala- (ըստ Fr.-ի).
 5) ուր. ար. ԷՄԱՐՆ — խ. ար-(id) (ըստ Fr.-ի). վարանց հետ հա-
 մեմատել և հայոց յարաբեր «арн-дзюс» սկզբնական ար. նույն
 արմատից. 6) ուր. ցուրի Էսեր» — խ. ipri (է ewiri)-id., 7) ուր-
 xuradi «զինվոր» — խ. xurati (ակկադ. kurati)։ Խուրբի, բառա-
 միկերը այսքանով չի սահմանափակվում, առկա են նախակամ և
 հետագառական տվյալները առայժմ պակասում են³։ Մուրաբյան
 արտահայտությունն ունեն -ու, -id, -է վերջավորվող հատուկ ա-
 նունները, ինչպես Memua, Inusua, Taritia, Sugunia, Teiseba,
 Rusa..., Xubuskia, Kakia (խուրուշկացիների թագավոր), դիտ-
 ութի թագավորի Asia անունը և այլն, նման Uapia, Kikia, Tuisa,
 Melitia, Daria, Arkania և այլ սուրաբյան մեկերին (նման. հա-
 յոյ՝ Շուրա, Արա, Հարմա, Ամարիա)։

Մուրբի ցեղի արևադարձը Ֆուսի և հայոց հին ժառանգ-
 արություն մեզ։ Մարինացու կազմից հիշվող — Մու, Թադ, Մանա-
 ւադը — վարդես «Հայկի» վարդիներ, անուշա զեղանուններ են,
 պերսեանիֆիկացիայի շնեթարկված, ինչպես այդ նույնը տեսնում
 ենք և այլ հին ժառանգարություններում (Աստվածաշունչ, վրաց
 «Քարթլիս ցխովրերա» և այլն)։ Մուից Մարինացին կազմում և
 Մուսխուսների նախադարձությունը, այսինքն պիտի ընդունենք, վոր
 այդ ազգեցիկ ֆեոդալական իշխանությունը խուրբիական ծա-
 ցում ունի, ինչպես Մանգակունիները՝ manda ցեղից, Սելուսի-
 ները՝ sala ցեղից (salak և mandak անուններից), Ամասունի -mada
 (սեկացի) ցեղից և այլն։ Հայոց «խոս» արտասանությունը
 ցույց և առիթ, վոր «խուրբի» անունը հնչվել և «խոս(ս)ի» և
 մայնավորով. ունենք նաև «խոս» բառը «Ժրատ» իմաստով, վորը

¹ Մեր սուրաբյանությունն և.

² Այդ լու. արմատը մենք տեսնում ենք հայոց պեղ-իմ բայի մեջ (թել-
 «թել».)

³ Թերևս խուրբի լեզվով և՛ tanišawa „Scepterträger“ (պաշտանակիր) բառը նկատվողական է վերաց կամ աֆիկի հիշա տառնուց. այն ժամանակ
 120- արմատը հասնել է իմաստի իմաստով մենք կհամեմատենք ուրարա-
 նախադարձ բայի նա (taniš- ժամանակցիկ «տարած») , վորը կա հայոց
 թվում (տան-կի) և վրացիների մա (tanišia)։ Մուրբի լեզվում առավ ըն-
 ցանքում էր 120-125-126-ն փոխառեցին, վոր Թերևս նշանակել և պատկերել։

Նույնպես այդ ցեղի անունից է Թափի, թերևս վերջին համա-
նիշ գրանց տեսարանից լինելու համար Այդ տեսարանները
Միջագետքի հույությունն առաջում էին գեղի փոքր Ասիա և
Եգիպտոս կղզիները (հմտ. գրանց միասնականության համաթյունը)
Իրանական վարչ ազգացությունը նկատվում է գրանց պանթանի
մեջ ի դեմս Indra, Nasatia և այլ աստվածների. թերևս և իրա-
նական (սմտաններ) ցեղը ևս խոսնվել է գրանց նա, առաջաց-
նելով վարչ իշխող գիմաստիա և MARSHANU ազնվականությանը
(չերիտասարգներ), իսկ լեզուն շարունակել է Թալ ընթիկ սուր-
բերականը՝ խուրբերենը (B-U-UT-II-I)՝:

ՍԱՎԻՏԱՆԻ ԱՐԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Միջագետքի հզոր հույություն և լեզուն (ակնադերենը) ընա-
կան է վեր պիտի ազգային Արարատի և Նրա լեզվի վրա, թե-
պես վերջինս սեմական լեզու չե վաղ արևելքով, վաղ էլ բառա-
պաշարով Ակնադերենի այդ ազգացությանը անշուշտ ուժեղ է
լեզվել և այդ բանը մենք պետք է ընդունենք a priori, թեկուզ
չառ մասերիսլի դեռ պահասում ես Այդ ազգացությանը լեզվել և
կամ անմիջապես և կամ այլ նախքան (Նուրուսկիս, Կազմու-
խի...) լեզուների միջնորդությանը, վերոնք զննվում էին ու-
րարապանների և աստուրաբանությունների միջև Այդ փոխառու-
թյունները կարող էին լինել և խուրբի լեզվի կամ թերևս արա-
մեայանների միջնորդությանը Այդ անուպարկներով են Միջա-
գետքի մի շարք տեղանքներ փոխանցվել հետագա հայերին:

Աստուրա-բանական (resp. սեմական) բառեր են ու-
րարաբանում—

1) արի(c) զմուռ, թնչպես և արի զմուռ, բույս(?) և փո-
րանց սկզբում կա GİS գետերմիմատիվը, վերը նշանակում է
զմուռ, փայտ: Առաջին բառը կարելի չե գրել և արի կամ ար-
ի(c) և անցել և նույն նշանակում ու նշանակությանը հայերին:
Յեղիբուրդ բառից կա և անանյափոր արինատի (թփուռ, այգի?):

2) MARSHANU (ազնվական չերիտասարգներ?) անունը, վեր չառ եր-
գրեք անվում Մյուրիսի և այլ տեղանք չերիբների նրա իրանական և իրա-
նական ազգացությանը նրա այլույլ ազգացությունների մեջ (և Եգիպտոսում?), մենք
ուզում ենք լեզուն տեսնել և նրա Գարգասանում: Մենք առաջադրում ենք
Յեղիբի պատմագրի պունջ մասնանի լավագույն գրամատի անունը կարգալ
պունջ մասնանի, ի նկատի անենալով, վեր հայերենում չերիտասարգի 2 և Մ
աստուրա նշանակությանը կարելի էր չերիբ:

2) *manac*(c) — վորոշ շափ և (արծաթի, գուկու, անագի համար) և համարվում և բարեխառն բառ։ Թողնելով բառի ծագման պարզիման, մենք կմասնանշեյինք, վոր այդ բառը կար վոր միայն ուրարտերենում, այլև հնապա հայոց մի շարք բարբառներում, թնշկես շամարեցոց ման (=կես փութ), Մարապայում՝ ման (= մեկ լիար)։

3) *Ē. GAL*, *պարառա*, իսկ ուրարտերենում *երերգ* իգնադրաթիկ գրությամբ բառը (սումերական ծագումով է) գտնում և ակնագրերենում *ekal*։ Մենք տառադրելում ենք այդ իգնադրաման հասկանալ Նշյունական գործածությամբ, ուրարտացիներից և թերես սասրիներից այդ բառը ման և և Հայաստան, ուր գտնապան տեղերի «Անգղ» հատուկ տեղանունները ակգրում պարզ նշանակել են *երերգ*։ հայերից անցել և և վրացիներին *Mangli* մեծի, Սումերա-ակնագրական *egal* : *ekal*-ը ախպես և գարնել հայոց մաս անգղ (<**agel* կամ **agil* նախնական մեկից), ինչպես *անգղ* թուրքերի անունը առաջին և **akil* նախնական մեկից (հմտ. լատիներեն *aquila* անգղ)։ Անգղ թերգանունը սասրիների մաս Դափում էր *egil*, հայերի մաս *logil-ege*։

4) Ուր. *xuradi* *պիմվար* = *սասուր*, *kurati* և խուրրիական *urati*։

5) Ուր. *nax-adi* *երազմեցի* (գանի վրա) = *սասուր*, *nah-u* (id)։

6) Ուր. *tamx-ubi* *սարխուր edini* նախադրությամբ նշանակել և ժամագրապես *պուրա* նման, *արարի* = *սասուր*, *tamx-ub* „*ergreifen*“ (բռնել, կախել)։

7) Ուր. *šurx-ani* *եփարնական* (գործ) = *ակնագ*, *sub-ur* *եփարն*, վորից հայոց՝ *սխուր* *եփարն*, *ան-սխուր*, *սխուրան* (պղծապիս) և վրաց *m-saxuti* *եմասու* (ակգրում՝ *եփարնական*?)։ Թերես *šurx-ani* նշանակել *արքի*, *քաղ* (հմտ. հայոց՝ *սխուր*)։

Ընդամենապես պետք և ասել, վոր ուրարտական փոխառությունների խնդիրը զեռ զմպար և լուծել, Շատ բառեր կան հայերենում, վորանք Միջագետքից են գալիս, սակայն ուրարտերենում չենք տեսնում։ Այդ փոխառություններն են — կներ (սասուր, *kunukku*, *kaniku*, վորից բառ իս և *սասուր* „*xnura*“ = *գիրք*, նման վրաց *cigni* *պիմվար* < *sign-um* «նշան» բառից), *անագ* (սասուր, *anaku*), *կուպր* (= *kupru*), *գաղաթ* (= *kakkadu*), *ագարակ* (= *սումեր*, *agar*, վորից համարաթին, *ager*, *պերմ*, *Acker* և այլն), վորպես սարգական կամ ֆեոդալական մի անցիար-աշն-

սեռական նոր յերևոյթ՝ կապում մասնայական պարտադիր աշխատանքի և հոգի մասնավոր սեփականութեան հետ։ Կան բաներ, զորոնց իմաստը պարզ չէ, ինչպէս ուրաւա. salmat-xi (պաշտակիցք?), զորի նմանը մենք տեսնում ենք և ակնպնդեալում (հմտ. և հայոց հասուկ տնայնը Սաղմունք)։ Իսկ շատ հաճախան բաներ ունեն մինչև իսկ ստեղծական արտաքին, ինչպէս հայոց ազգի (պգի)—սուժ. սմս (պոչխարք), հայոց անաթ (անթ)—սուժ. սսսս (id.), հայոց աղ (պղ)—սուժ. սմ արք, հայոց պատ (քեսա)—սուժ. bad (id.), հայոց էշ—սուժ. սնն (զորից հուն. <οσν-ος, րոմ. asinus, οςα, Esel.), հայոց զարշապար—սուժ. gir. şapal (պոս) և բառից, աշխիքն՝ գոտաւակ), հայոց՝ կապար—սուժ. սմ. kabbar (id.), հայոց՝ տարգաւ (<տարգաւ)—սուժ. adagur և աշխ։

Այս բոլորը ցայց և տալիս, զոր տաւաբա-բարեւական և ստեղծական ծագումով շատ բաներ են յեղել, մեծ մասամբ բնութաբանական բաներ։ զորոնք ուրաւապնդիների և պատմական Հայաստանի այլ բնիկների միջոցով անցել են հետագա հայերին։

ՅԵՐԱՅԱՆԻ ՏԱՐԵՐԸ ԼԱՅՆԱԿԱՆ

Հայոց լեզվի վոչ ճշգրտական տարրերը գալիս են մեծ մասամբ պատմական Հայաստանի բնիկների (անպրամիմներ) լեզվից. զորոնք յեղել են փոքր Հայքում, Տուրքերանում, Մոփրուսի Արարատական ձկերն ու բաները զորոչ սահմանափակ քանակով նույնպէս թափանցել են հայոց լեզվի մեջ. զորպէս կամ ընդհանուր բաներ ու ձկեր մյուս վոչ ուրաւապնդիների հետ և կամ միայն զուտ ուրաւապնդան տարրեր։ Հայերենի վոչ ճշգրտական տարրերը նեապայում հարստանում են նաև ի հոշիվ վրացական (մանավանդ հան-մեղրական) լեզուներից, մասամբ և սեմական ու իրանական, իբրև հայերի մեծփորձան վերջնական արդշունք։

Փերականական տեսակետից ուրաւապնդներն ու հայերենը չեն սկսում բաներ „1“ բաղաձայնից, ունեն կոնցրուենցիա, զերանձանական մասնիկների գործածութեան, չկոպ բայերի համար „3“ նիշը (և կրովորականի „1“?), սեռական հոլովի համար „1“ մայնավորը, տարիսա Ծ.րդ յեղակի— ձիւ—հայոց—աւ և աշխ։ Իսկ բառամիմներից հայոց լեզվում կան, մեր ստուգաբանութեամբ, նեաւայլ ընդհանրութեանները—

1) Ուր. abili (dubi) — ամփել (արթ)», ամփեացրի՝ միացրի (Հովս. գրառ. յամփեում „приобщаю“):

2) Ուր. ebani «չերկիր» — ամանե (սեղծ գյուղ), մեղրեական abani, քարթվական ubani (բայց և -abani Gardabani-յի մէջ, վորը կտար նախընթաց՝ Գարգանան): Այս ամանե-ը ի դուր նամարում են իրանական բառ:

3) Ուր. euri (ewri) ամեր» — նայոց արւի (նայն իմաստով) նեւեյայ բառերի մէջ՝ որեւր (ճիշար՝ որեւր < արթ-եւար) կամ արեւանք (< արթ-անք) ամերիք, ըստ Ն. Մարի՝ «ЭВРИ, աղ-նքականներ», և արթ-արդ ամիրոջ վորդի» (> աղջիկ): Այս euri-ն կար և խուրքի լիզվում: Համեմատել թերևս և վրաց ewri aralo (= անք Aralo?) բացականչութեանը:

4) Ուր. inukani «նույն» — Ն. Ինքըն, սեռակ. նոր. ինքեան:

5) Ուր. istini «այստեղ» (նշվել է՝ istin) — Ն. ստան, այստեղ, այս նույն տեղից» (откуда же), վորի նամար կա և ուրար. istinini (= istinin այս տեղից):

6) Ուր. edini, վորը գրվում է և edin և նամանորեն նշանակել և «այստեղից» (edia = տեղ) — Ն. անդէն (там же, отсюда же):

7) Ուր. ul- «զնայ, ուղեորդի» (ul-adi «զնացի», բայց ul-ulie կշինթարկն, ulustaiibi և ulustibi «առաջնորդից» Քաղը) — նայոց ուղ-ի և կամ ուղ- «ուղղութեան, նամաղարէ» (ուղ-իդ, սանդ-ուղ-ք «առաինան ուղի» կամ «փոսուղի», ինչպես տեսնում ենք Վանի ժայռերի վրայ):

8) uduli «զինի» — Ն. տալի «վայրի խաղաղ», վորը կա և արաբերենում (duali) և սաթերենում (tol). վերջինս անցել և ուրարացիների միջոցով:

9) meš- «մատուցել, նվիրել» (meš-uli «մատուցելի», umešini «նվիրվեց, արվեց») և meše «նարկ, տուրք» — գրաբարի մեռ. իմ «նվիրվում եմ», մեռ. ություն «նվիրվածութեան, ուստի» (մեր թարգմանութեանն և):

10) suduk-ubi (suduk-ubi) «ամերիցի» (?) — Ն. շտուգ- անեմ՝:

11) šani «կաթնա» — Ն. սան «կաթնա»:

¹ Այս առաջարկութեանը Սանդալյանինն է („Les inscriptions cuneiformes urartiques, Venise, 1900, № 419“).

² Այս նախ (նշվել է san) բառը դարձ և ամփել կելիշի յերկնիզման արևանդարթյան մէջ և ստացվում է Gdize-յի կոմից (սեռ ՀԱ. V, № 108): Սանդալյանը պատահական կերպով տեքստի այլ նամանում, ուր չկա այդ բառը, «իւրեղացի այդ նախ բառը, նամեմատելով նախընթաց նախ»:

12) ¹ Ar'a (աստծու անունն է) — Արա, գորգես զարնանն և գերածնունդի աստված (նման. ինքիբնն նույն զարնան-կանույի ² Ar'a աստվածը):

13) ¹ Aris-a- (² Aris-a-). գորգես շարստի: աստված(7) — նայոյ շարած-եմէ, գորտեղից արտաւ (— արտա):

14) aru-ur Էսերանդա — նայոյ՝ արմ-ուտ, դ-արմ, արմ (այս-տեղից՝ արմ-անալ, դ-արմ-անալ, ընդ-արմանալ շարք կարել, օղբեմէս):

15) paxini Էյեղ, կոզ — պախը Էյեղիբուս (սէր փոխան-ցումով, նման. արար, bakara Էյեղ, կոզ. ասորիներէ bakra, կրեակն bakar «աստված», գորնց նու նամեմատել զոչ միայն փոխանով և պարարա-ք, ալլիս Էյանար):

16) hat-ubi Էկարեցի, անջատեցի — է. նաւ-անեմ, յաւ-եմ

17) seeri Էազնայուկէ և set (se-ir) Էրարմէս — է. սար, սար-ակ (Էպպաթ): Նման սաւայ սերի(того) Էազնի (գրանից) և արանա Էպպաթ:

18) tunc Էմով, լին — նայոյ Էմով (և գրայ tunc?):

19) tsigul-dulini (Մհերյան զոան արմ.) Էձէ, ծխական արարողության (շ) — նայոյ և գրայ Էձէ (id.):

20) klara կամ klra Էնոյ, յերկիր (իսկ ebani Էյերկիր, страна) — նայոյ Էյերկիր, գորք, բաւ իս, սաւցղի և ekir նին ձեից erkin բաւի ձեարանական նմանողությամբ (պղծեցությամբ): նման և սուսերական ki-ur (id.):

21) pill(e) Էջրանցը — նայոյ պեղ-եմ (արմանն է յեղել pil):

22) veli Էպունդ, Էգորմաս — նայոյ պեղ-Էգունդ (սնա-նայով պեղ-ջ, գորից պեղ-ջ-ուկ). իմաստարանսին նամեմատել իրանական Էպունդ և քրդական պունդ Էյունդ (նման. նաե Պունդ ի Շապուհ):

23) uiri Էպեր, դիրուկ (Մհերյան զոան արմ.)? — նայոյ Էյուր (id.):

24) ulx Էնանի — նայոյ ուղի Էյուրի նաւնք, նորմանք:

25) ulg-uxe Էսոողության — նայոյ Էոջէ (olj) < olg-ից?

26) ipx-ulie Էփչրե (շ) — է. փխ-ուր, փչ-ուր:

27) urb-ulini Էպունի, զեզնի (էւ urbika- (urbikase — ուղղ, նու, urbikani- բաց, նու.) — քրմական պաշտանյա (Էպ-պոյ?) — նայոյ զազմական (Արարաւ, Նարարայ)՝ Բոթիկ, Բո-թիկ (< orob-el, orb-el) Էնեղուկը շերեփով (քմականով և ալլիս)

գերցնել և թափել նորից ամանի մեջ (զոգացնելու համար)՝, Թերևս Որբելյանն նախաբարությունը քրմական ծագում և ունեցել? Orb-el սկզբնականը պիտի նշանակի ըստ այդմ՝ զոհող, զեղող, ուր -ell ներգործական ներկա գերբայի իմաստ և պատահում (հմտ. գրաց՝ m-iob-ell լծնող, m-ët-ell լկարող... նախախեթական mass-el կամ para-el քրմականը, վոր պիտի նշանակեր Երմնող կամ քրմանող)։

28) Kapise—ցորենի շափ և —հայոց լկապին՝ նույն-իմաստ բառին։

29) patari շքողաք, վորը սկզբում նշանակել և պատած, պարսպապած սեղա՝ pat- բայարմատից, վոր կա և հայերենում (պատել, պատապիմ, փաթ-այթ, փաթաթիմ...) և իսկթերենում (pataliandu շթող պատենա, pitt-ula շրրցի փաթույթ, փաթույ, փաթիլ)։ Իսկ patar բառը անցել և ամբողջությամբ հայերին— հմտ. Եղի-պատր-ուշ (ուր Եղի լգերին) — Եղի-վաղ լգերին չուր?)։ Փաթը-ին լգորը բերդ. համեմատել նաև՝ Kul-bitarni, Uzina-bitarni քաղաքանունները հին Հայաստանի տերիտորիայի վրա (ըստ ուրարտ. արձանագրությունների) և այլուր պատահող Pitura, Pitra, Piera, Petra և այլն բերդանունները (այդ petra շրրցա՝ անունը անցել և հայերին շրրցա՝ և տատարներին birli անվանումներով)։

Ուրարտերենը կարող և անշուշտ շատ բաներ պահած ունենալ հայերենի մեջ, բայց գրավոր ժառանգիս չկա, իսկ վորոշ ժառան էլ այդ ուրարտական բաներից մեկ մնում և անհասկնալի։ Սերբենի լինում և յերկու լեզվադրյունների ազդեցություն ու կանախա հայոց բառի մեջ։ Որինակ, ուրարտերեն les (ճնշվել և les), վոր նշանակում և լշես, ա, կարծես թե պահվել և հայոց լես es (շայմ՝ լես) զերանվան մեջ, բայց սրա մեջ և կա ճգնադրական ԵՂՕ-ի նստվածքը, վոր պիտի տար հայերենում *es (եծ), կամ *es (եզ)։

ՇՐՐԱՐԵՍ-ՎՐԱՅԵՎԱՆ ԼԵՃՎԱԿԱՆ ՏՐՐԵՐ

Արդեն մեր կողմից ժառանգվել և ուրարտերենի ուղեորական հայրվի (և խուրբի տր. հայրվի) -Աժ ժառանկի նմանությունը

¹ Տե՛ս Ս. Անանյանի—Հայոց բառ ու բան (Վաղարշ, 1912, էջ 334)— Լարին, սրափել— յուսալիկության յոփից յերկրով աննշով՝ վեր բարձրացնել և ծորացնելով թափել կաթնայի մեջ, վորպեսզի յոփը կաթնայի լլթունքից չթափվի։

² Տե՛ս իմ "Общие элементы между урартским и армянским языками", Госиздат Армения, 1936 г., էջ 40.

գրացական — ad ասանկիկէն: Քանորի մեզ մենք կ'ամենատեսչենք —
 ուր. սիմի «10000» (= սի-իմի տասն հարյուր?) գրաց սիմի
 տասն, ուր. տսլի կամ տսլի, գոր հանախ գրգում և էսլի (Ճշգիւ և
 էսլի) տասրիս — գրաց տսլի (իւ.), ուրարա. տսլի (Ճշգիւ և տսլի-
 ի) «կենդանի, անոռ» — գրաց չաօտի «կենդանի» (անոռոթ),
 ուր. մսրսանի «մամանակ» (?) — գրաց մո, մոեծ (իւ.), ուր.
 սիս «կիւն» — գր. չոս (իւ.):

Ուրարեանքն ալ համեմատաբարական կանաչաւու-
 րը գորգեա պատմութիւն նախնական մի աղբյուր մեզ տաւ և,
 գոր ալ լեզուն ասեմից շատ առայժմ անգերակցում և ուրարե-
 յան (խուրրի-միտանի) լեզուի նա, նա «խեթեանքն նա և
 մասամբ գրացեանքն: Մանանափակ քանակով նախնական կան
 ուրարական քանք և ներք, գորանք մի մասը կարող էր ընդ-
 նաւոր լինել Հայաստանի և ոչ ոնդրամիւնքն, գորանք ենք
 պարտական նայց գոչ նդերպական նա լեզվամիւրքի նամար:
 Այժմ քննենք նախ պատմա-նախնական ասեմական և ուրար-
 ական պոնիկներ, գորգեա նախնական աղբյուր:

3. ՈՒՐԱՐԱՆԻ ՊԱՆԹԵՄԵՆ — ՊԱՆԻՄԻՍՈՒՆ ԱՂԲՈՒՐ

Ուրարական պոնիկները անշուշտ արտացոլած պիտի ու-
 նենա, զիմ գորտը չափով, յար կրողների պատմական զարգաց-
 ման ալիւալ լինելները, նախնական ցեղերի կամ տանի, խա-
 չափումն, գրանք քաղաքական տալիսութիւն և մարտի
 գրանք և նախնական կուրաւրանքի փոխադրեցութիւն բնագավա-
 րում:

Արմանագրութիւնների մեծ մասը (շնարարական, կուր-
 տաւական...) նվիրում են գերադույն տալիս Մարգուն (Xa-
 li), գորք Ուրարաւի քաղաքական նորութիւն և երազանիսի
 սիմիոն էր: Անշուշտ առ լեզու և սկզբում գորտը ցեղի կամ տն-
 զի տալիսը, նախնական ուրարաւայիների ալ սկզբնական

¹ Քեզեա գրացեանք (մո) անկէ մա և տալիսիքի data «սուս, սու-
 ցան» (գորից նայց գոր) և նախնական մեզ պարտ քանքն: Անշուշտ
 նայց տալիս քան և մա և ալ սկզբում սկզբներին քան գրաց տալի
 քան, լինելու գոր տալիսը էր Մար (գրաց տալիս ի վերական *idat —
 նայց տալիս):

հաստատված, զոր կապված է յնդիկ Վերին Զով գետի վերին հոսանքում գտնվող Մուսասիրի շրջանի նեա Այս քաղաքի Քաղաքում տանալն են գալիս Իշպուրի և Մենուա քաղաքները, նվերներ տալիս, գահաբերություններ կատարում, փոքր մի սըրբատեղի կառուցում։ Մինչև իսկ աստարների թագավոր Սարգանը ազոթել է այս տանալում։ Ինչևնք այդ տանալի քուրմ Ուրգանայի խոսքերը. «Դու ստում ես, զոր ստանց թագավորի (Սարգանի) թույլտվությամբ զոչ զոր գործ չի մացնում [Մուսասիր] աստվածներին յերկրպագելու, բայց յերբ աստարական թագավորը յեկավ, միթե յես խանգարեցի նրան. ինչ նա եր անում, անում է և ես [Ռուսա 1-ը], ինչպես յես ընդգրիմանում նրան։ Մուսասիրի Քաղաք այս տանալի ավերը և Քաղաք արևանի հափընախանուր Սարգանի կողմից այնքան ցնցեց Ռուսա 1-ին, զոր նա ինքնապաշտություն գործեց։ Ուրարտուի ժողովուրդները, զեթ մի մասը, իրենց խալց էյին անվանում, զորն անշուշտ յնդիկ և նեապայում, Ուրարտուի նգրություն ժամանակ, այդ ժամանակ, ինչպես և շատ դարեր նեա, ժողովուրդներն ու ցեղերը ավելի շատ իրենց աստվածներով կամ հովատով էյին իրենց անվանակոչում, քան յնդիկան հասկանալով։ Ուրեմն պիտի ընդունել, զոր Քաղաք աստվածը սկզբում յնդիկ և ուրարտական կամ նախորդան զորոչ ցեղի կամ ցեղերի աստվածը, զոր այդ ցեղը (ցեղերը) տարածվելով կամ գաղթելով վերջիվերջո Վանի շրջանը և խաանդվելով տեղական այլ ցեղերի (թերևս նա յնդիկ ուրարտական) նեա, հովանորեն ինչ ցեղի նեա, ստեղծել են նեապա նգր Ռուսան—Ուրարտուն։ Միայն Քաղաք աստվածն է, զոր ստանում է ասերս անվանումը՝ մակդիրը (Xaldie curie «Քաղաքն, տիրոջը»)։

Հաղպպեկ արևանադրություններ ունենք, զոր նվիրվեն այլ աստվածներին։ Դրանցից մեկը Վանի «Քաղաքի Զամիս մզկիթի քարակաթոն է, զորը նվիրված է Xutuni աստծուն, զորը պետք է աստղջուլյուն, ուրարտություն (և) մեծությունը շորոնի Մենուային և յուր զորդի Ինուշպուային (7 սողից է)։ Մի նման քարակաթոն (6 սողից), զորը գտնվել է Վարազում, նվիրվում է Մենուայի կողմից Teiseba ամպրոպի աստծուն։ Քյույանդունի Ռուսա 1-ի արևանադրությունը, թեպետ սկսվում է «Քաղաք փառքով, տերունական» (=Քաղաք տիրոջ փառքով), բայց այդանկ շինվող ընդը նվիրում է Teiseba աստծուն, կոչելով նրա անունով [«IM-1 URU»] Իշպուրի և Մենուայի մի արևանադրության մեջ («Անշուշտ պարզաբան» արև.), զորը խոսում է

Քաղցու գառը (Xaldiei gusi) շինելու մասին, փորձված գնաթե-
րաթյանների մեջ Քաղցուց նկատ հիշվում է Uarubani աստվածը
(«մի գառ Քաղցուն, մի յեղ Քաղցուն, մի երկնի (2) Վարուրանի
աստված...»)։ Սեման ջրերի վրա կառուցված բերդը նախանայի
չի փոր նվիրվում է Telleba ջրի, աստերքի և անդրադի աստե-
րան։ Քերես Xutuni աստվածը ասողության աստվածն էր,
փորվեման նրանից և հաջցված շառագիւթյան, ուրախության,
մեծության, բնական ննց նախ «Քաղցու ջրանի» մզկիթում կա
և «Քաղց արեւը» նվիրված մի քարակոթող, փորվ նույն Մե-
նուան հաջցում և այդ նախք յուր և յուր փորցու համար՝ Vā-
rubani աստվածը նիշատակվում է «Քաղցու գառն» շինարարու-
թյան նկա. Քերես գա կամ շինարարության կամ լեռների աստե-
րած է (այդ շղուարտ շինված և բարձր լեռներում)։

Քաղմանկան մեծ արձանադրություններում միշտ նիշատակ-
վում են յերեք աստվածներ—Քաղցը, Տեչերան և Արգինի աս-
տվածները։ Վերջինը արևի աստվածն է, իսկ աստվին յերկուսը մեզ
հայտնի չեն։ Քաղմադրները ազաթելիս միշտ դիմում են այդ
յեռյակին, բնական արշավանքը գեղավարում և և անմամբ գրա-
վում յերկրներ ու քաղաքներ միայն Քաղցը, նմանապես արձանա-
դրություն վայելչացնողին ազատում են ելի այդ յերեք աստված-
ներով։ Եւրո գեղեցկում էլ այդ յեռյակից նկատ ավերացվում է
և աստվածներ Բիսիույին, վորը կարելի չի նախանայի թե այդ
յեռյակի նկատմամբ և թե մյուս նիշատակվող աստվածների մա-
սին, փորվեման շեռ շաղկապը չի գրվում. այսինքն կաննեմանք,
փորն ավելի նավանական է, Քաղց, Տեչերան, Արգինի (և) Բիսի-
ույին (այլ) աստվածները Այդ աստվածներն են սգնության գա-
լիս (xalab-me DINGIR¹), ասղթության աստվ ռաթադին։

Միակ արձանադրությունը, գրված յերկու անգամ, փոր
տալիս է արարարական ամբողջ պանթեոնը, զա Վանի «Ջրեղիմ
գաղի» աշտպես կաշված «Մեների գառն» արձանադրությունն է,

¹ «Քաղց արեւը»—Մենուան Ելուրների փորվն այդ քարակոթողը գրե
տվեք Քաղ ջրերի (manu) Քաղցյան փորվածությանը (Xaldim tēdim) Մե-
նուային Ելուրների փորվան (2) Բերդադային Մենուայի փորվան աստվա-
թյան (uigim), արախության (yubim), մեծության (xubim)։ Տեա Մեյր
§ LXXX և Մանց. § 82. Նմանապես նաև Մեների գառն արձանադրություն
— «Xaldim badim DINGIR² EM³» badim manu uigim «կարսուն, մե-
նու... Քաղցյան փորվածությանը (2) աստվածների աստվածների փորվա-
ծությանը Քաղ ջրերի աստվածյան Ելուրներին և Մենուային» (այդ 24)

վոր պրէյ են Ուրարտայի թագավոր Իշպուինին և յուր վարդի Մենուան, թերևս ալի ժամանակ, յերբ պրանք ժառան են թագավորելիս յեղեղ: Դուան վերևի ժառի վարիանալը ունի 31 յնդկար առդ, իսկ սակինը՝ 63 առդ:

Մենոյան դուան (սինենր կապուսի) այս արևանադրության սեղ կարգում ենք. «Խալլ արիւշը, Իշպուինին Խարզուրի վարդին (և) Մենուան Իշպուինիի վարդին այս դաները շինեցին. Կասասանցին (չգրին)՝ զսրերուսթյան (սնվիրաբերության)՝ որվա, ամսվա՝ Խալլուան, Տեյլերային, Աղվնիին (և) ասսամաներին ժողովուրդների (չեղունների)՝ 6 դուա Խալլուան գունի (nipsidi 'sal), 17 արջառ (և) 34 գոյխար Խալլուան գունի (arbuuc), Տեյլերային՝ 6 արջառ (և) 12 գոյխար, Աղվնիին՝ 4 արջառ 8 գոյխար, Խուսուսինին՝ 2 արջառ 4 գոյխար, Տուրանինին՝ 1 արջառ 2 գոյխար, Ուս ասսանին՝ 2 արջառ 4 գոյխար, Կալանին ասսանին՝ 2 արջառ (և) 4 գոյխար, Շերիսու ասսանին՝ 2 արջառ 4 գոյխար, Արսինիս ասսանին՝ 2 արջառ 4 գոյխար, Մուսգուս ասսանին՝ 1 արջառ 2 գոյխար, Դիդուսինին ասսանին՝ 1 արջառ 2 գոյխար, SIN (— Լուսնի) ասսանին՝ 1 արջառ 2 գ., Խալլոյան զենքերին (hell¹ չաներին?)՝ 1 արջառ 2 գ., Արիսին ասսանին՝ 1 արջառ 2 գոյխար, Կուերա ասսանին՝ 1 արջառ 2 գ., Սիլգրի ասսանին՝ 1 արջառ 2 գ., Տարրանին ասսանին՝ 1 արջառ 2 գ., Ագարուսու ասսանին՝ 1 արջառ 2 գ., Իրմուլինին ասսանին՝ 1 արջառ 2 գ., ասսանին, վորը Կալին (7) և փոխադրում՝ 1 արջառ 2 գ., Ալլուսուլինին ասսանին՝ 1 արջառ 2 գ., Երինու ասսանին՝ 1 արջառ 2 գոյխար, Շինիլի ասսանին՝ 1 արջառ 2 գ., Ունինու ասսանին՝ 1 արջառ 2 գ., Այրալին ասսանին՝ 1 ա. 2 գ., Զուգուսարու ասսանին՝ 1 ա. 2 գ., Խարա ասսանին՝ 1 ա. 2 գ., Արագա (Արամա) ասսանին՝ 1 ա. 2 գ., Զիկեկունին ասսանին՝ 1 ա. 2 գ., Ուրա ասսանին՝ 1 ա. 2 գ., Արմիլեկինին ասսանին՝ 1 ա. 2 գ., Արնին ասսանին՝ 1 ա. 2 գ., Խալլոյան ասնանանության (hairingic)² 1 ա. 2 գ., Խալլոյան սինության (hairingic)³ 1 ա. 2 գ., Խալլոյան dirugic (հաղթության?)՝ 1 ա. 2 գ., Խալլոյան զորքերին՝ 2 արջառ 4 գոյխար, Տեյլերայի զորքերին՝ 2 արջառ 4 գոյխար, Արուսարառու ասսանին՝ 1 ա. 2 գ., 2 արջառ (3) 4 գոյխար՝ Աղվնի թագաւոր ասսանին, 1 արջառ (և) 2 գոյխար՝ Կուսինու թագաւոր ասսանին, 1 արջառ 2 գ.՝ Տուրանին թագաւոր ասսանին, 1 արջառ 2 գ.՝ ասսամաներին Խալլոյան թագաւորների, 1 արջառ 2 գ.՝ ասսամաներին Արմուսինի թագաւորի, 1 ա. 2 գ.՝

Քառասուն ժողովին, 1 ա. 2 վ. Շուրա աստված, 1 ա. 2 վ. Քառասուն զոհերին, 1 ա. 2 վ. Տեյեքայի զոհերին երեկոս քաղաքում, 1 ա. 2 վ. Արգինի աստված զոհերին Ռեյինի քաղաքում, 1 ա. 2 վ. Արիա աստված, 1 ա. 2 վ. Քառասուն զոհին (arnie), 1 ա. 2 վ. Քառասուն փառքին (usmashic), 1 ա. 2 վ. աստվածներին Քառասուն զոհերի, 1 ա. 2 վ. Քառասուն աստված, 1 ա. 2 վ. Կիլիքանի աստված, 1 ա. 2 վ. յերկրների աստված, 1 ա. 2 վ. Արգանի յերկրի աստված, 1 ա. 2 վ. Մուրնի քաղաքի աստված, 1 ա. 2 վ. աստվածներին յերկրի Ասկանա, 2 արխա 4 զոյխար՝ աստվածներին յերկրի Դիրա, 2 ա. 14 վ. աստվածներին ժողովուրդների (զիզուներին), 4 արխա 18 զոյխար՝ Քառասուն աստված, 1 ա. 4 վ. Ասկանի աստված զոհերին երեկոս քաղաքում, 2 վ. Բարանի յերկրին, 10 վ. Արաքայի աստված, 1 երինջ 1 զոյխար Բարա աստված, 1 երինջ 1 զոյխար՝ Տուշուա աստված, 1 երինջ 1 վ. Աուր (Ազի) աստված, 1 արթ 1 զոյխար՝ Այա աստված, 1 արթ՝ Սարգի աստված, 1 արթ՝ Մինալարգի աստված, 2 զոյխար՝ Իլխարի աստված (նախ, 1 զոյխար՝ Բարմիա աստվածուն, 1 զոյխար՝ Միլիա աստվածուն, 1 զոյխար՝ Արա աստված, 1 զոյխար՝ Ազիա (Ազիդիա) աստված, 1 վ. Ուրա աստված, 1 վ. Ասկանի աստված, 4 զոյխար՝ Արգի աստված, 2 վ. Բուսանի աստված, 17 վ. Քառասուն ժողովածություն (Քառս ժողովածին?) (և) ժողոված աստվածներին ժողովուրդների Քառս զոհին (շնարնի) աստվածություն Իշուրինին Մարգուրի ժողովուն (և) Մեհուալին Իշուրինի ժողովուն և ալին և ալին

Մեհուալին զոհն ալա պանթունի մեջ մեհա էլի տեանում ենք, զոր Քառս, Տեյեքա և Արգինի աստվածները աստվածացում են, ինչպես զոր յեռյակով են հանգիս զայն աստվածուն արեանագրություններում։ Մեհուալ աստվածություն սկզբունքը զայն և զեռ աստվածուն-քառսական չըլանի (Հա, Էնիլ և Անու յեռաստվածությունը), ալալիս եր և ինթերի ժառ—Արինա քաղաքի աստվածուն (—Հեպիա?), Դասաա (—Տեշուա) յերկրի աստված և Մեհուալ աստված (կամ աստվածուն?)։ Համեմատել նախ սկզբունքը պանթուն և քրիստոնեություն մեջ՝ հայր, զորգի և առքը ևայն։ Բայց մեհա զիսենք, զոր Բարան քաղաքի զիլքի բարնալան հեհանալով հեհանալ զերկրում և տեղական Մարգուր աստվածը, զորից հետո զայն և յուր զին Զարփանիթ և արևի աստված համալը։

Նշանակալից է, թոր ուրարտացիների մաս Մալգ-Տեղուզ-Արզնի յերրորդությանը նկատ գալիս է Մուսախի մասովմը, ժորին Մենուան Նվիրում է աստծին արձանացության (անս փերը)։ Իսկ Աշուա-գարգայի Ուարուքանի ասովմը բրու-նում է յերկրորդական տեղ։ Լուսնի ասովմը զլիսովոր ժորխան-ասովմ արաանայովմ է գազովարացով (SIN), իսկ գազաննս ժորխանասովմ արզամ է Նեյյանարեն՝ Sielardi անունով, ժորը բարդ բառ է, կազմում ՏԵԼ- կամ ավելի շատ ՏԵԼ- պիշերս է ardi արենս բաներից, այսինքն յուսինք պատկերացվել է ժորպես պիշերով արենս։ Նման կազմության ունի անշուշտ է Մինույար-գի ասովմս անունը, կազմում tsinu-+ardi արենս բաներից (թե-րևս tsinu-ardi ասացո՞ղ)։

Հասարակիք է դիտել, թե ինչպես գտնի կենդանիների ըս-տակը նկարագրե պահասում է—Մալգուն՝ 17 արջառն է 24 գոյ-խար, Տեղերային՝ 6 արջառն է 12 գոյխար, Արզնիին՝ 4 ար-ջառն է 8 գոյխար, Մուսախինին՝ 2 արջառն է 4 գոյխար։ Այդ Մուսախինն, ինչպես է Տարանի, Ուս, Նարախի, Շերխուս, Ար-սիմերս ասովմաները ասովմն յեռյակից (Մալգ-Տեղուզ-Արզնի) նկատ կազմում են ասովմաների յերկրորդ գասը։ Յերրորդ գասը, ժորանց գտնվում է 1 արջառն է 2 գոյխար, կազմում են—Սնուզ-աս, Դիգուսայի, Սիլարգի, Ատրինի, Կուերս, Սլիլդի, Տարախի, Ապարուսա, Իսուշինի, Ալլուսուշինի, Սրինա, Շինիթի, Ունինա, Այրախի, Չուգուսարու, Մարս, Արամա, Չիկեկունի, Ուրա, Ար-ձիրիգինի, Արնիս, Շուրաս, Սլիս'ա, Բարափարա, Կիլիբանի։ Չորրորդ կարգի ասովմաներն են (1 արջն է 1 գոյխար)—Բարա, Տուշպուս, Աուի, Այա-Հինգերորդ կարգի ասովմաներն են (1 արջն)—Սարգի, Մինույարգի, Վեդերորդ կարգինը (1 գոյխար)—Իդխարի (Իշխարի)¹, Բարմիա, Միլիա, Ար'ա, Ազիա (Ազիպիա), Ուրա, Ասինի։

Ասովմաների մի շարք անուններ կարծես թե տեղական ուրարտական լեզվով են նկարագրված։ Որինակ, -ini նախադասական անունը ներ անունում Xutuni, Nalaini, Diduaini, Garubaini, Imuaini, Alaptugini և այլն ասովմաների անունների մեկ։ Դրան-ցից Xutu-ini մենք կարող եյինք կապակցել xutu գոյականի նկատ, ժորը մասնում է անանցավոր Xutunaxi գիշխանության (չ)

¹ Այդ ասովմն գտնվում է 2 գոյխար, ժորը թերևս մեկ պետք է լինի՝ բառ գտնող անասունները՝ ասովմանական իշխման։

քառի մեջ: Diduini աստվածանունը կարելի չե կապակցել didu-
 քառի նեա, վարը գեղարհական ինչ վար իմաստ ունի (պոնը
 didulini urbulini՝ նախադասության մեջ): Irmuini անունը -ու
 անանգով ասացվել է Irmu՝ զոյականից, վարը մեր կարծիքով
 նշանակում է շնորհակցության (նմա, խեթերեն Irmu- շնորհակ-
 ցության, Irmuši շնորհակց): արեմե Irmuini աստվածը մարդ-
 կանց փրկում էր շնորհակցությանից: Մարա աստվածը յերեի յե-
 դի է հանապարհների և ուղեորությանների աստվածը, քառի
 վար ուրարականում կա է հասարակ xaric շնանապարհ, ուղի,
 արշավանք քառը, վարը մեծ մասամբ գրվում է զազափարազով
 (𐎧𐎫𐎼𐎡𐎹 KASKAL*Y): Այդպես և Այրաշի կարող էր լինել ayra
 քառից և նշանակեր ժայռերի աստված (նմա, հայոց՝ աղ), ինչ-
 պես Արամա աստծու անունը կարող էր կապ ունենալ ժարաա-
 անդերի նեա, ի նկատի ունենալով հայոց շարած-եյն և շա-
 րաւաւ (←արաւ) քառերը: Այնի աստծու անունը մեր կարծի-
 քով նշանակել է շին, բարձրություն, ինչպես ունենը Xaldini
 քառը շեալլայն (←Մալլա) բարձրությունը կամ Xaldini քառ-
 անանգ շեալլայն (←Մալլա) բարձր փանքին: Քերես և աշմ-
 ժյան Արնա-զադ, նին հայոց Արնայ անն, և հայոց հասարակ
 լեան (յերեն) քառը կապում լինի 𐎠𐎫𐎼𐎡𐎹 քառերից: Քեթական
 աստվածների մեջ էս, յերզման համար, մասնանշվում են լեո-
 ների, գետերի, յերենքի ու յերկրի, հողմերի ու անպերի աստ-
 վածներ, ինչպես և արական ու իգական աստվածներ: Մեզ թվում
 է, վար ուրարական պանթեոնի վերջին աստվածները — Իգիտա-
 րի (Քերես՝ Իշխարի), Բարձրա, Միշխա, Աիա, Աինի և Քերես
 Ար՝ա աստվածները յեդի են իգական: Առաջինը՝ Իշխարի կ- և
 ալլ լեզուներում (խեթ. 𐎠𐎫𐎼𐎡𐎹) և Նախն և, ինչ վար և 𐎠𐎠𐎠𐎠-
 Բարձրա աստվածուհին հաճախեմե Մալլա կինն էր, վարը bag-
 haru (աստված Բարաւա) անունով ունեցել է արման Մաւա-
 սիրում (քառ Մարզանի նկարապրություն, վարը հափշտակել է ալլ
 արմանը): Անշյանարական haris և har(u) նեա յե՛ն իրա-
 րից (ալլ կարծիքին էր և Մեյաը): Միշխա աստվածուհին Քերես
 լիներ մեռնողի գիցուհի, ի նկատի ունենալով հայոց ցեղ (ալլ),
 ուսիական լիլ Էսերմ և ուրարա. 𐎠𐎠𐎠𐎠 զկին (←գրայ 𐎠𐎠𐎠𐎠)
 Ար՝ա աստվածը Մանդալլյանը համեմատում է մեր Արաշի նեա,
 սակայն աշտակ ալն Անշյանական խաշմագառ կա, վար ուրար-

* Քերես Թարրից նշանակում է շնանապարհներից:

* Քերես քերական քառը ունի նայն 15- նախաձայնից Էսեմ (←𐎠𐎠𐎠𐎠)
 համանի քառը հանգիս:

տեղնն ալ վանկազրից հետո զայիս և կոկորդաշին պայթական՝ հնչյունը (հայոց Վերաշեն, վորպես զարման աստված, մենք կապակցում ենք խեթական նուշահունչ և նուշերմասա ԱՐՁ („Flurgott“) ասածու հետ։

Քաղաքների աստվածների մեջ ամենից շատ մեծարվում և զոհերի քանակով Արդինի կամ Մուսասիր քաղաքի աստվածը իսկ մենք գիտենք, վոր Մալգու ասաջին տանաբը աշտակ և հիմնվել Մինչև իսկ այդ քաղաքը Մներյան զոան աշտ մեր արձանագրության մեջ ազելի յե բարձր, քան Ուրարտուի աշխատաշատ քաղաքները—Տուշպան, Կումնու, Երիզիս, Արմուինի (վորակիցի մեր Վերմուինի) իշխանները) և քաղաքները։

Հարեան ժողովուրդների աստվածներ քիչ են պատահում Մներյան զոան աշտ պանթեոնի մեջ։ Նախ հիշատակենք Տեյսեբա ասածու անունը, վորը հատուկ և յեղել սուրբայան ժողովուրդներին Tesup անունով։ Ուրարտացիք աշտ անունը փոխեցին զարմանելով Teiseba, վորը Մալգույց հետո յերկրորդ անգն և գրավում։ Արդյոք աշտ ցույց չի տալիս, վոր ուրարտացիք ամենից շատ ազգվել և ձևավորվել են աշտ խուրդիական (սուրբայան) ցեղերից, վորպես ընդհանրապես նախնայան ցեղեր։ Այս Տեշուպը կարելի յե ասել վոր ամենատարածված աստվածն և յեղել, վորպես յերկնքի, ամպրոպի, անձրևի, քրի և կայծակի աստված. զերմանացի վորոշ գիտնականներ այդ Տեշուպապաշտ ժողովուրդներին կոչում էին «Tesup-Völker»։ Հայերը այդ անունը փոխել էին փոյուզիական Մարտիրոսով, վորը հետո զարմավ հասարակ անուն (աստուած), իսկ նրա փոքրասիական-խուրդիական կնոջը—Hepit mutani-յին (Հեպիտ սքանչելի, հեծու-սիշաար սքանչելի) սրբաբնույթայինը թուրքական զոհում մենամենում)¹—հայերը պահեցին, փոխակերպելով Հեպիտ, հպտանք, հպիտ, հպիմ ։ հպիմ և աշխատի իմաստի մեջ։

Յերկու աստվածությանը բարեկամական ազգացությանն են ժամանելու։ Մեկը Այա աստվածուհին և, վորը համարվում էր „Mutter des Waldes“ (տես Kleinas, Forsch., B. I, էջ 142, ժան. 2)² և զորք և ամվում և խեթերի մոտ (A. A.) իսկ

¹ Համեմատել նաև հայոց Վերա զեղեցիկ՝ Լոշիշիանը։

² Ebeloff-ը ասում է „Vgl. für die Götter Aia als „Mutter des Waldes“ ihre Beziehung zur Vegetation, speziell zum „Grün“ im Kodex Hamurapi V a. II §2 ff.“ (տե՛ս)։

ուրարտական Ura աստվածը Ura-š անոմ գործ և անվելի Բարեխնամ զորպես պարնան և կոմի աստված (հմմտ. մեր Վերսու-ն և հույների „Arei“-ը զորպես պարնան և կոմի աստված)։ Յեթե ուրարտական պանթեոնի Ip-xa-a ri-e աստծու անունը կարգանք Ip-xa-a-ri-e, ինչպես Անյարդն և ասախարկում (ip և ig նշանները շատ նման են), ապա կոչվեմանը բարերյունական-խեթական Ixxa-ra աստվածուհու անունը, զորը յեղել և զեանի և յերգումի աստվածուհի (Kl. For., B. I, հշ 9)։

Սեթական աստվածներին նման են—ուրարտ. Xaltainie, զորը կարգում են նաև Tar-ra-4-ni-e (xai և tar նման նշաններ են), զորը արասալինով մաս և խեթական Halara աստծուն։ Այդպես և ուրարտական Albine աստվածը նման և մշտունորեն խեթական *Halebinu-š աստծուն, ինչպես և ուրարտ. Anapša աստվածը նման և խեթական *Napsara աստծուն։

Մի աստված ևս կա ուրարտական պանթեոնում, զա—Šardi աստվածն և, զորին Սեյսը կապակցում էր լյուդիական Σάρδης (Հաարի), բայց և Եսրե աստված) աստծու հետ։ Իսկ այս šard-Հաարի) կար իրանական յեղուներում—անակը. çarad Հաշուն, ասրիս, ավեստական sardəša Հաարիս, ասրին šard Համուս, նոր պարսկերեն šāl Հաարիս։ Քերես ուրարտական Sardur Թագավորների անունը այս աստծու անունից և կազմվել -ur անանցով (հմմտ. Սթիանի յերկրի Veduri ալթանունը, Արծրունիների Վաշկուր) ալթանունը նման -ur անանցով), և ի դուր չեր, զոր ուրարտական գրույները այդ Թագավորների անվան մեջ աստվածաթյուն եյին տեսնում, գրելով Վաստած Ri (=Istar)+du-ri», իսկ Ri զագափարանիչը մշղել և SAR. բայց իսկականը ինարկե սա չե, այլ šard+ur։

Համեմատական դիցաբանության համար, հատկապես ուրարտական աստվածների ծագման և կապակցության տեսակետից, մեր այս ուրարտական պանթեոնը շատ մոխարներ չի ընձեռում մեզ։ Մի քանի աստվածներ—բարերյունական բնույթ են կրում, մի քանիսը կապվում խեթական աշխարհի հետ, մեկը՝ խուրրի (սուրարյան) ծագությունների հետ (Տեյշերա), մեկը՝ իրանական ծագումով և (Šard-) և այլն։ Ուրարտական կրոնի և դի-

* Զե. Kretschmer-ի հոգածը „Iudra und der heethitische Gott Inara“ (Kleinasi. Forsch., B. I, H. 2, հշ 229), զորակց նա ասում և „der babylonische Vegetation—und Kriegsgott Uraš“.

ցարանության պատմական արժեքազորման նստար շատ քան կարող էլին տեսչ մեղադրներէ, մանաւորներէ, կտախներէ, խաւարիներէ, խաւաւղիքներէ, չալաւիտներէ, ելամիտներէ և այլ ՚մն արեւելյան մագաղաւրդներէ ստաւմաները և կրօնը, վարը մեծ մասամբ չի նստել մեզ:

Բարդը և, վար ուրարտական պանթեոնում յիշ ենք տեսնում կին ստաւմաներ, թերեւ լավ շնտկանաբար պատմաւոր, քանի վար այդ մասին յնազարում ցուցում չկաւ: Համեմատական գիշարանական վերլուծման նկատմամբ միայն կարելի չի ընդունել, վար ստաւմաններ են—Alz, Bartsa (—Bag-barts), թերեւ և՛ Silla: Նոյն գերը վարդեւ, սոցիալ-պատմական և իդեալոգիական վարը ֆակտորներէ նկատմանը, թույլ և նանդեւ պալիս, ի համեմատության ոգամարդական ստաւմաններէ, նաև սեմիտներէ մաս: Փոքր Ասիայում, ընդհանրապէս, գերիշխում էր կնոյն սկզբը: Բանքը ի դեմս զմեծ ստաւմանմանը: Ան գիշուհու, Kilele գիշուհու, ինքնորէ Արեւմտ քաղաքի ստաւմանուհու (Hepiti), Լուգիտ-ցիներէ Արեւմտից գիշուհու՝ և այլն: Հալոց մաս ևս Աստիտի պաշտամունքը ցույց և տալիս հայերի վարը սկզբնական հասկումի (Փոքր Հայքի) փոքրատիական իդեալոգիային պատկանելը: Մայրիշխանության նկատմանը Փոքր Ասիայում յերեմի սփնչի ուժեղ են Մալցած յիշել, քան Արարատի և Միջագետքի մագաղաւրդներէ մեզ:

Մալց ստամու պատմա-եթնիկական և կուլտուր-քաղաքական նշանակութիւնը նույնչափ մեծ և յիշել ուրարտական մագաղաքի Անափորման պրոցիտում, վարչափ հայերի նստար թրակիական-փայտաշխական Sabads(oz) ստաւմանը, վարը գրանարում և այլ եթնակուլտուրայի սկզբնական գերիշխումը հայերի Անափորման մեզ: Սեմի այս գիշարում մշտում և հույս պատմաբաններէ

¹ Համեմատել գերեզմանացոյցի զրո տեղերէ յորը հոգաւորելու նկատմամբ „Nun war... diese Stile oder diese Hölle oder diese Wasser (?)... beschickigt, nun (im Artemis die Ephesusche und Artemis die Kolo'sche Hof und Haus [arab. haia-k], Erde und Wasser, (landlichen) Besitz... sollen erstreuen“ (Kl. F. B. I, 62 81):

² Ամբարդ լինել նստարում արտեղ մամանելի նաև հայերի պատմական ելուարդ Մայրիշխանի կարծիքը այս ինչորէ չաղէ: Պատկերացնելով մասին, ինչպիսիք և է, „Geschichte des Alterthums, 2 Aufl., B. II, 22 418), — „Als der Hauptgott erscheint, darthweg Chaldi, „der Herr“, die dessen Krieger Koenige und Volk galten. Dieser Name hängt an an den des Volkes der Chaldäer (so auch in den pontischen Gebirgen), und so ist die Annahme

առանձը, թե հայերը փայտգիական ժապավ առնեն, լեզվական ազերս առնեն նրանց հետ, նրանց հետաքցներն են, զինվելով և հաղթելով նրանց համա և այլն¹։ Այդ տեսակետից շատ նիշա երեկանայի Ա. Սամվելյանը (ՀՀԻՆ Հայաստանի հրատարակչություն, 1931, էջ 92), առնալով «Այն հանգամանքը, զոր արժևներն աստվածը [Sabadzi-Յա] խոր առ ժապավան հիմքեր և զցիչ, ցույց և առաջիկա, թե փորագրի փնտական նշանակություն են առնեցել հնդկադարձական արժևները պատմական հայտնության, իրեն մի ազգայության, ժապավան շաղախի մեջն»։ Հայերի այս երկնիկական և իրենազգայական կապը (աստվածներ) փայտգիայիներին, խեթերին, լյուդիացիներին և այլ փայտգիական ժապավայրերին հետ մեկը կարող ենք հաստատել և այլ աստվածներին ներկայությունը հայոց պատմության մեջ (Hept, Tarku, Massan, Zawal, Ara- և այլն), զորանց մասին կիսովի առանձին

vielleicht vertreten, dies sei auch der eigentliche Name des im Urzeit bestehenden Volkes gewesen, so dass wie in Assur das Volk und Gott den gleichen Namen geführt hätten. Ein gestrichelter Nachweis aus den Inschriften ist jedoch bisher nicht gewonnen, so dass hier Zurückhaltung geboten erscheint».

¹ Հայերը իրեն ազգային փայտգիայիներին, իրեն և նախ հնդկադարձ կապը (VII-րդ դար, 12), այս նկարագրում և խեթերի պարզում հայերի և փայտգիայիներին միասնական զինվել և հաղթելը, իսկ այս բանը ազգայության նշան եր համարում հայերը, ժապավ փայտգիայիներին հետաքցները (Փրիցն ձուռու), իրեն և նախա խեթերի կապը (IV դար Քր. առաջ) — «Ἀρρίωνι το πᾶν γένος ἑκ Ἀρρίωνος καὶ τοῦ πᾶν τοῦ πᾶντος γένους», հայերը փայտգիական ժապավ և նախ շատ փայտգիականության իրեն լեզվական հայերենի հնդկադարձ լեզուն աստվածներին և նախ շատ ազգային, առնել շատ հաստատել և այլ փայտգիականությանը (Երկ. հնդկադարձականությանը)։

ՅԵՐԿՐԴՐՅ ՄԱՅ

ՈՒՐԱՄՏՈՒՆ ԵՆՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

(ԸՍՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄՆ ԿԿԱՅՑԻՓՅՈՒՆՆԵՐԻ)

Այս մեր համգածը պատգործելու յն արձանագրությունների ախ արտահայտություններն ու բառերը, վորոնք քիչ թե շատ բնութագրում են ուրարտական պետության և հասարակության ներքին կյանքը։ Նախ կվերջնենք ախ վկայությունները, վորոնք վերաբերում են Նյութական արտադրական կողմին, յերկրի եկոնովիկային և տեխնիկային, բաժանելով ախ բոլորը յերեք մասերի. ա) գյուղատնտեսության (խաշարածության, հողի պատգարծում և մշակույթներ), ի) արհեստներ (մետաղագործության, կապագործության) և Շ) աշխարհ կառուցումներ (շրանցք, մայախառններ կամ նիշաներ, բերդեր, տաճարներ...)։ Այս մասը լրացվում և մանրամասնվում և և ալմ մնացած Նյութական կուլտուրայի հիշատակարանների պնությամը, վորոնք մեծ նշանակություն ունեն հիշա հասկանալու արձանագրությունների ախ վկայությունները։ Յերկրորդ գլխի մեջ մենք տալու յենք ախ տեքմիտոլոգիան, վորը արտացոլում և ուրարտական հասարակության սկզբնական կազմակերպությունները—ցեղ, առնմ, ընտանիք, մոլոմուրդ։ Հետո նկարագրվելու յեն սոցիալական ախ շերտավորումները և պետական սրգանների ֆունկցիաները, վորոնք հասուկ են յեղել զասակարգային Ուրարտային, վորպես պետության, ի մեջ աշար զասակարգերը և զասերը, քրմությունը, պաշտոնեյությունը և ալին։ Որա հետ արվելու յն պետական-բաղաքական և վարչական մի քանի կողմերի նկարագրությունը։ Վերջին յերրորդ գլխիը տալու յն ընդհանուր գծելով արձանագրությունների զազափաբախտական և վաճախին կողմը, ախ և՛ նրանց կրոնական և մասնավորապես նաև ուղմական մասնությունը։

Ա. ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՎՈՆՈՄԻԿԱՆ ՍԵՎ. ՏԵՆՆՆԻԿԱՆ
(գյուղատնտեսություն, արհեստներ, կառույցներ)

1. ԴՅՈՒՂԱՏԵՍԵՍՈՒԹՅՈՒՆ

ա) ԵԱՏԵԱՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Խաչարածությունը վերաբերյալ ավյանները հարուստ են բազմակողմանի շնու: Հիշատակվում են մեծ մասամբ ալյուրյա կենդանիների առուներն ու գրանց քանակը կամ վորդես զոհարելության առարկա կամ վորդես ավար, վոր քչվում բերվում է թիայնա: Բուն ուրարտերեն միայն յերեք բառեր կան կենդանիների համար—*raxini* տառլան (— յեղ-կոյ), *laxē* շվոյխարս և թերես *ullu(ni)* տուգա: Մնացող առուները—*մի*, *հարթ*—արվում են գաղափարանչերով: Գաղափար կազմելու համար խաչարածության զարգացման մասին ավելորդ շնու համարում վորոշ վկայություններ բերել: Արդիւտի I թագավորը մի արշավանքից հետո, վոր կատարել էր Մանա և Բուսառ յերկրները (Արմիա յնի շրջանում), բերում է Վան 100 ուղա, 700 մի, 22629 արջառ և 36530 վոյխար (տես Խորխորյան արմ. Col. IV, 6), Իսկ Իւդուլնի և Մենուս թագավորները, յերբ ալյուրում են Մուսաթրի Խարչու տաճարը, Նվիրարերում են 1112 արջառ, 9020 (կամ 9120) գառ, 12480 վոյխար (տես A. Gotze-յի *աւուժաւորությունը*, ZA, № 7, V, էջ 119): Ձիերով հասկացելու հարուստ է յեղել Գրաուելի յերկիրը, վորը վաստակւան մի մեծ յերկիր էր Աւարառուի մեջ և հարկ էր վնարում վերջինիս թագավորներին: Հիշենք ալյուր, վոր հետագա Հայաստանն ևս հայտնի էր յուր միերով, վոր ուղարկվում էյին Միջագետք կամ պարսից թագավորներին, ինչպես և զոհվում էյին արեւի տաճանու: Եւ շնուց առում հայոց կեթանոսական տաճարների (որինակ Ամառնի) կամ հետագա յրիստոնեական վանքերի կալվածներում արածող բազմաւազար հոտերի մասին: Անշուշտ այդ տաճարներն ու վանքերը պիտի ունենային և մեծ քանակությամբ վարձկաններ կամ սարուկներ այդ գործի համար, իսկ ուրարտացիների ժամանակ բոցի այդ կար և ցեղերի համայնական անտանապահություն: Յնթե գալուսային մասերում (որինակ՝ Արամանի, Արամվրի, Ավարթնոցի շրջաններում) ընդգծվում է ալյուրործությունը, վորի համար ջուր և բերված լինում, ապա ալլ մասերում (Եթիուշի, Նաիրի յերկրներ...) գերելիւում էր հացահատիկալին տնտեսությունը: Աստուրական թագավորները Տիգրիսի վերին հոսան-

քի ժառերքը (ճուտիս, Գաղղաժուսա յաղղաքներում) շինել էյին հասուկ տերտրներ ցորենի ու հարդի համար, զոր գրավում էյին կամ հարկի տեղ բերում էյին Նաիրյան յերկրներից: Բայց որս նեւ գարգացած է յեղեւ և անասնապահությանը, հասկապես յեռնային շրջաններում, զորտեղ ցեղերը զեւ սոցիալապես յեյին շնորատփորփիլ և անասնաթյան մեջ խաշնարամեական եր: Անցրեմն շատ տարրերնայ և թվում, յերբ մի Արիախի յերկրից տեմն տարի տասնյակ հազար անասուններ են քշվում Բիւյնու և աշ-նուամենայնիվ տեղային այլ անասնաթյանը շարունակվում է և զերջնականապես քայքայված չի լինում: Իներեւ արևմտա-գրությունները ունցնում են այլ պարերեքական արշավանքների տվարի թիվը: Արարատական արևմտագրությունները բացի զերու-նիշյալից կանկրեւ տվյալներ ու ժանրամատնություններ չեն տալիս: Աստուրական տարբուրներից միայն գիտենք, զոր Թուսու 1 Թագավորը ժողովրդին սովորեցրել է ազատ պահել:

Ե) ԼՈՂՈՂՆԵՐՈՐԳՄԻՍ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՅՆԵՐ

Սեղեւազածուքյան

Արևմտագրություններից մեկ զեւ հայտնի չի մի ախպիսի տերմին, զոր արտահայտեր մշակվող հողը և լինեք զրա մի ասան-նին միավորը, ինչպես եր, որինակ, սուսերական արաբ. լ, զորը հո-գի ժամանփոր տեփանդության նեւ և կապված լինեղով սոցիալ-անասնական զորոշ իրավակարգի նեւ (սարկաախրական և ժա-նավանդ՝ ֆեոդալական) անցնում է շատ յերկրների (—հայոց ու զրազ արաբ, յասու—նու յե արաբ, զերմ. Acker, akra և այլն): Մեկ հայտնի յե միայն կիտա կամ կրեւա կիտա շնոչ՝ բուսք, զորը սովորական իմաստ ունի, ինչպես հասկացվում է նաև զոր-պես շգեմին, համեմատել շնարարության ժամանակ կիտանի kuldini-manu uı giel ismini bidanti շնոչից պատվար (? Թուրք) հանդերձ պատով ուշտեղ կատուցեղի(?), ուր կիտա բուսք աշ-րուր արտահայտվում է նույն կանցեղցիայի Նախագաւության-ներում գաղափարաբարձ KI (—հոգի Բայց կա և կիտա՞ն DIN-GIR¹ և շնոյի աստվածներ), ուր շնոչը հասկացվում է զոր-պես գեմին, սարկիկրյա աշխարհ (սանդարմեա, արեւոստան):

Արարատեղնում կա մի բառ (larag), զորը մեք կարծիքով պիտի նշանակի շարս, տեղատեմեա: Արինակ, Թուսու 1-ի Յե-շիշյալում Թուգան արևմտագրության մեջ կարգում ենք—A¹ ID alaminı & edutı[c] 1 Rosaxinatdi ali A¹ ID alaminı URU

Tuapant[ot] ևragi ևxullini ևlt A¹ 1 Roxalimene ipadul[ot] ևլրևըը զհախց ևնց կացրի (բերի) Ռուսախիմայի ևամար (= զհախի Ռուսախիմա), վորոշ ջրեր զհախց (զհատվ) Տուչպանյան արտերը վառպելու, վորոշ ջրեր Ռուսախիմայի խմելու ևամարս (ապեր. 28—32, թարգմ. մերն է)։ Այց ևragi բարս կա և Արգիշտիի ևարխուրյան արքանապրոթյանների առաջին աշանյակի ննց սկզբում—ևlticini (առավում ևս?)... ևlticic ևnaini ևragi—ար վերջին բառերը զգալաններ են։

Կա և մի յերրորդ բառ xubii (xubi) անանագ, վորը մեր կարծիքով ավելի ընդարձակ իմաստ ունի և պիտի նշանակի «գալա, առփառան, նովիտ (prunina)»։ Դարձ և անվում ևստուկ անանգների մեջ և առանձին ինչպես Xuturini xubi «հոտորյան գալա» (= Ջփարթնոցի չրջանը, վոր ևայց ժամ նում կոշվել և «Բաղարու գալա», հաստպարս), Tuaratimni xubi (ևորի. VII 13)—ևայց Տուարածառափ, Nirihi xubi (ևորի. II 13) «երբիրայի գալա» (Նիրբրեքերի գալան է, բառ առաքական ագրյուրների և լեզվի Nirihi „lowlands“ նույն իմաստի բառ է (տես Սեյաի ժամ, էջ 397), Ashalai xubi (ևորի. IV 34)՝ Արմիա լճի կողմերում։ Բայց կա Ջփարթնոցի նույն արքանապրոթյան մեջ և xubi giase (թե xubigi ase?) pili ևltiduli «գալաը (xubigi «գալաներ»)»... ջրանցքով ջրելու» (ապ)։

Ար ևնց դարձ և անվում «ցորեն» (ևայ) գաղափարները (202133 kapile PAT «202133 կապին ցորեն», տես Մարգարյան տարեգրերի VI, արձ.), վորի ևամար վարպես չափ դարձ և անվում kapile բար, վորը Մաոցել և մեր կարծիքով և ևայց մեջ (բառ Աննուն բառարանի՝ «կապին—անուն մը, չափ մը, շիերիկ, և անոր մեկ մասը»)։ ևամենցի նայերի ժամ զես Մում եր այց բար—«կապեսկ—ցորենի առանուրդ, վոր կարգի խզապանին իրրև վարձ ցորենը ազալուն» (տես Հ. Անույան, Դավառական Բառարան, էջ 551)։ Ի միջի այլոց և խեթերենում կա նման բառ (gabassar և kapassar), վորը ևնցի տարածություն մի միավոր է, նման մեր նկատարին և այլն. Թերևս սկզբում ցորենի չափ եր, նետո գարևել և ևնցի տարածություն չափ, կապված այնքան տարածություն նետ, վորը վերջնում և ցանելու ևամար այսինչ չափի ցորեն, նման մեր գաղառներում դարձ անվոյ «լիար»

1 Մաղարածուն ևյ չսկի-ն կարելի չե ևսմեռանկ ևայց վերջիստ կամ տիպան բառերի նետ.

բառի իմաստափոխման, ուր լիար նշանակում է շին ֆունտս (= բաւման) և լիար նախադրում է ցորենի արտի վորոշ տարածութեան (որինակ, մեր արտը կամ աշկին այսքան լիար է)։

Արգիշտի 1-ի Քորխորայան արևմտագրութեան մի տեղում (Col. VII¹¹⁻¹²) կարգում ենք „*ḫašubi KUR Eḫunini URU Ardi-mei ašlu zirbilani*“, վորը թերևս նշանակի *հափաքեցի՝ Եթունայան յերկրի Արգիշտի քաղաքի* *ašlu*-ն (= հացը?) և *zirbilani* (= ?), համեմատել *ašlu* (հնչիւն է *astin*) բառի նետ հայոց բառումն կամ բառումն բառը, վորը նշանակել է շոր հաց։

Ուրարտուի յերկրագործութեանից մեզ Ֆադիկ են և այլնայ իրեր—յերկաթե խոփ, յեղաններ, կա նաև քարե ազորիք (յերկանք), վորը լիսեռի (GCH) վրա եր ամրացված է պատվում։

Ցնկաւաններ—արքի, պարսեպ...

Ուրարտուի, ինչպես և այժմյան Հայաստանի կլիմայական և սահմափակուր պայմաններում, գյուղատնտեսական ավելի բարձր կուլտուրաների համար անհրաժեշտ էր հողը վտակել։ Սեփ մենք տեսնում ենք, թե ինչպես Ուրարտուի թագավորները ջրանցքներ են կառուցում, ասուններ են բերել տալիս այլնայ պետքերի համար (վտակելու, խմելու), աշկիներ և պարսեպներ (պարսեպներ) են տնկում և այլն։

Արևեստական վտակման յենթարկվել են, որինակ, այժմյան Վաղարշապատի Զփարթնոցի շրջակա հողերը, Վանի շրջանի *Համաթրամա-տա* (Menuai pili *Հմնուտայի ջրանցք*) և Քնիշ-գյուլի („*Rusaxina*“) արևեստական լճի միջոցով, այժմյան Արմավրի („*Argistixina*“) շրջակա հողերը, Ուլիսու քաղաքի հողերը (Ուրմիա լճի մոտ), վարտեղի ջրանցքը Գուրատառայի (= Մեփրատի) նման եր, ինչպես ասում են ասուրական աղբյուրները։

